



19 Մարտի 2010թ.

Դիտողություններ ու առաջարկություններ
ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած
Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման
հայեցակարգի վերաբերյալ

ՀՀ կառավարության հավանությանն արժանացած Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգը (Հայեցակարգ), ի սկզբանե ուշացած էր, քանի որ արդեն 2008 թ-ի սեպտեմբերին, նախքան Հայեցակարգի ընդունումը, ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվեց «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում լրացումը, որով դադարեցվեցին կապուղիների համար մրցույթները թվայնացման անհրաժեշտության քողի տակ, որով իսկ սահմանափակվեց ողջ թվայնացման ընթացքի թե տրամաբանությունը և ինչու չէ իրավական որոշակիությունը:

Այնուամենայնիվ, Մամուլի աջակցության «ԻՆՏԵՐՆՅՈՒՄ» հասարակական կազմակերպության Տեղեկատվական իրավունքի և քաղաքականության կենտրոնը հարկ է համարում ներկայացնել ստորև իր դիտողություններն ու առաջարկությունները:

1. Նախևառաջ, կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է հատուկ ուշադրություն դարձնի ԵԽ նախարարների կոմիտեի՝ անդամ երկրներին ուղղված (2003)9 հանձնարարականին՝ թվային հեռարձակման ժողովրդավարական և սոցիալական ներդրումների խթանման միջոցների վերաբերյալ¹ (Հանձնարարական): Ըստ Հանձնարարականի հավելվածի 1-ին կետի նախքան թվային համակարգին անցնելը, բարենպաստ կլինի, եթե անդամ երկրները տարբեր ոլորտների ներկայացուցիչների, ինչպես նաև հանրության հետ խորհրդակցելով մշակեն հստակ ռազմավարություն ապահովելու մանրամասն ծրագրավորած թվային անցումը, որը կավելացնի դրանից ակնկալվող օգուտները և կնվազեցնի հնարավոր բացասական հետևանքները:

¹ Recommendation Rec(2003)9 of the Committee of Ministers to member states on measures to promote the democratic and social contribution of digital broadcasting (Adopted by the Committee of Ministers on 28 May 2003 at the 840th meeting of the Ministers' Deputies).
ՀՀ, Երևան 0023, Արշակունյաց պող. 3, 3-րդ հարկ, հեռ.՝ +374 10 583620, ֆաքս՝ +374 10 569041, էլ-հասցե՝ office@internews.am, www.internews.am

2. Հիմք ընդունելով վերոշարադրյալը, պետք է արձանագրենք, որ տվյալ Հայեցակարգը չի պատասխանում թվային անցման սկզբունքային հարցերին: Այս առումով, անհրաժեշտ ենք համարում մատնանշել Հայեցակարգի նախընտրելի այն մասերը, որոնց անդրադարձ չի կատարվել Հայեցակարգում՝
 - 1) ՋԼՄ-ների շուկայի վրա առկա և հնարավոր ազդեցության գնահատում՝ առաջնորդվելով միջազգային փորձի խորը ուսումնասիրությամբ.
 - 2) Իրավակարգավորում, իրավական ակտերի ընդունման/փոփոխման անհրաժեշտության եզրակացություն.
 - Լիցենզավորման սկզբունքներ և չափանիշներ թվային նոր միջավայրում.
 - Նոր «խաղացողների» մուլտիպլեկս օպերատորների (բովանդակությունը խտացնող), ցանցային օպերատորների (բովանդակությունը լսարանին հասցնող) կարգավորում.
 - Նոր «խաղացողների» լիցենզավորումը, նրանց իրավունքները և պարտականությունները, վերահսկողությունն ըստ օրենքի:
 - 3) Թվայնեցման համար անհրաժեշտ ֆինանսավորման չափը, պետական աջակցությունը, հեռարձակող ընկերությունների մոտավոր ծախսերը և օտարերկրյա անմիջական ներդրումների խրախուսմանն ուղղված պետական քաղաքականությունը.
 - 4) Սոցիալական փաթեթի ձևավորման, հեռարձակող ընկերությունների ներգրավման սկզբունքները.
 - 5) Համակարգող/կարգավորող մարմնի ու վերջինիս իրավունքների և պարտականությունների հստակ սահմանում.
 - 6) Տեխնիկական նկարագիր, որդեգրված չափանիշներ (մատչելի ոչ տեխնիկական մասնագետների համար, սակայն Հայեցակարգին հավելված առանձին խորը վերլուծություն/լուծումներ):
3. Բացի դա, Հայեցակարգում բավարար չեն ներկայացված կարգավորման խնդիրները, այդ թվում անկախ կարգավորող մարմնի դերը թվային կապուղիների արդյունավետ օգտագործելու գործում:
4. Անհրաժեշտ ենք համարում նաև նկատի առնել թույլ օղակ հանդիսացող մարզային հեռուստառադիոընկերությունների կարևորությունը՝ հատկապես համայնքային զարգացման տեսանկյունից՝ վերջիններիս նկատմամբ կիրառելով հնարավորինս բարենպաստ պայմաններ, որը բխում է Հանձնարարականի հավելվածի 3-րդ կետից:

Եզրափակելով՝ հայտնում ենք մեր պատրաստականությունը հնարավորինս աջակցել և մասնակցել հեռարձակման թվային համակարգի ներդրման աշխատանքներին:

**Տեղեկատվական իրավունքի և քաղաքականության
կենտրոնի իրավաբան**

Մովսես Հակոբյան